



FRANK D. LANTERMAN REGIONAL CENTER

Ապահովագրի վերնագիր: Մատնիչի Ապահովագիր

- Վերստուգումը Թուական: 1. Վաերացում Վարիչ Մարմնի Board of Directors կողմէ Դեկտեմբեր 1, 2010
2. ԶԲԾի վերաքննում Նամակ Օգոստոս 1. 2011
3. Վաերացում Վարիչ Մարմնի կողմէ Սեպտեմբեր 28, 2011 ԶԲԾի կախեալ վաերացումէն
4. Վերստուգում եւ վաերացում Վարիչ Մարմնի կողմէ Օգոստոս 26, 2015

Նպատակ՝

Լենթըրմէնի Օրջանային Կեդրոնը Վարիչ Մարմնի անդամներէն, պաշտօնեաներէն, վարիչներէն, գործաւորներէն, պայմանադիրներէն, ծառայութիւն հայթայթողներէն կը պահանջէ որ ցուցաբերեն աշխատանքի բարձր մակարդակ եւ անձնական բարոյականութիւն իրենց պարտականութիւններու եւ պատասխանատուութիւններու ընթացքին: Իբր Կեդրոնի գործաւորներ եւ ներկայացուցիչներ, պէտք է պարկեշտութիւն եւ ուղղամտութիւն գործադրենք ամբողջացնելու մեր պատասխանատուութիւնները եւ ենթարկուինք բոլոր կիրարկելի օրէնքներուն եւ կանոնաւորութիւններուն: Այս ապահովագիրը հիմնուած է վստահեցնելու որ անհատներ կասկածներ, մտահոգութիւններ, կամ ապօրինի ապացուցներ, անբարոյական եւ անվայել գործունէութիւն կրնան ներկայացնել՝ առանց փոխվրէժի վախի:

Ապահովագիր՝

1. Պատասխանատուութեան Տեղեկագրութիւն

Եթէ յետ մէկը ՖՏԼԸԿ Վարիչ Մարմնի անդամներէն, պաշտօնեաներէն, վարիչներէն, գործաւորներէն, կամ յետ մէկը ՖՏԼԸԿի ծառայութիւն հայթայթողներէն կամ ծառայութիւն հայթայթողներու Վարիչ Մարմնի անդամներէն, պաշտօնեաներէն, վարիչներէն, գործաւորներէն տեղեկութիւն կամ մտահոգութիւն ունի յետ կասկածելի անվայել թիճընը կեդրոնի աշխատանքներէ եւ անվայել հայթայթող/պայմանադիրի աշխատանքներէ օրէնքի դրժումի կամ ՖՏԼԸԿի ապահովագրէն, իրենց պարտականութիւնն է տեղեկացնել թիճընը կեդրոնի անվայել աշխատանքները եւ անվայել հայթայթողը Մատնիչի համաձայնութեան ապահովագրի: Ներքին կը սահմանուի թիճընը կեդրոնի անվայել աշխատանքի եւ անվայել հայթայթողի աշխատանք՝

Թիճընը կեդրոնի անվայել աշխատանք մը կը սահմանուի իբր շրջանային կեդրոնի աշխատանք, կամ գործաւորի, վարիչի, ծառայութիւն հայթայթողներու վարիչ մարմնի անդամի, շրջանային կեդրոնի գործի ընթացքին մէջ, որը անօրէն է նահանգային կամ դաշնակցային կանոնին կամ կանոնաւորութեան, համաձայնութեան պայմաններու դրժումէն, խարդախութիւնէ կամ զանձային չարագործութենէ, չարաչար կառավարական կառուցներու գործածութենէ, կամ կը պարունակէ հսկայ սխալ ընթացք, անհմտութիւն, կամ անճարակութիւն:

Անվայել հայթայթող/պայմանագիրի աշխատանք կը նշանակե աշխատանք մը հայթայթող/պայմանագիրի մը կողմէ, կամ գործատրի, վարիչի, ծառայութիւն հայթայթողներու վարիչ մարմնի անդամի մը կողմէ, նախատեսուած Նահանգի կողմէ վճարուած ծառայութիւններու, որ հակառակ է նահանգի կամ դաշնակցային օրէնքներուն կամ կանոնին համաձայնութեան պայմաններու խախտում, խարդախութիւն կամ գանձային չարագործութիւն, չարաշահում կառավարական կառուցներու գործածութիւն, կամ հսկայ սխալ ընթացք եւ անհմտութիւն:

Շրջանային Կեդրոնը եւ Զարգացական Բաժնի Ծառայութիւնը (ՋԲԾ) (Department of Developmental Services/DDS) ունի բազմատեսակ գանգատներու եւ վերաքննութեան ընթացքներ՝ պատրաստ օգտագործելու հայթայթող/պայմանագիրներու, գործատեղիներու, յատուկ տուններու, ծնողներու, եւ չաճախորդներու կողմէ: Ասոնք կ'ընդգրկեն Յաճախորդներու Իրաւունքներու Գանգատներ, Սկզբնական Միջամտութեան Գանգատներ, Due Processի Խնդրանքներ, Միջամտութեան Խնդրանքներու Խորհրդածողով, Լենթըրմէնի Արդար Ունկնդրութեան Որոշումի Խնդրանքներ, Վերնագիր 17ի Գանգատներ, Քաղաքացիի Գանգատներ եւ Մեկնաբանութիւններ եւ Ծառայութիւն Հայթայթողներու Վերաքննութիւններ: Այս ամէն մէկ գանգատը եւ վերաքննութեան ընթացքները ունի լուծումի առանձին գործընթացքներ: Այս վկայագիրը միայն կը վերաբերի Շրջանային Կեդրոնի եւ Հայթայթող/Պայմանագիրի Մատնիչի Գանգատներուն ինչպէս որ բացատրուած է վերը:

2. Առանց Փոխարէժի

Ոչ մէկ անձ որ անվայել շրջանային կեդրոնի աշխատանք կը ներկայացնէ կամ անվայել հայթայթող/պայմանագիրի աշխատանք կը ներկայացնէ պէտք է վախ ունենայ անհանգստացումէ, փոխարէժի կամ աննպաստ գործի մթնոլորտ: ՖՏԸՎի գործատր մը որ կը հակառակի անձի մը դէմ որ ներկայացուցած է գանգատ մը պատիժի կ'ենթարկուի մինչեւ նոյնիսկ անմիջական գործի դադրումէ: Մատնիչի Ապահովագիրը մտադրուած է քաջալերելու եւ թոյլատրելու մտահոգութիւններ արտայայտելու ՖՏԸՎին, որ առիթը տայ ՖՏԸՎին հետապնդելու եւ, եթէ ընթացքը ապացուցուած է, յարմար ճշդումի միջոցներ ձեռք առնելու:

3. Գանգատ մը Ներկայացնել

Անվայել աշխատանք կամ կասկածելի անվայել աշխատանք կարելի է ներկայցնել հետեւեալ անձերէն ռեւ մէկուն Ֆրէնք Տ. Լենթըրմէն Կեդրոնէն ռեւ ժամանակ, հետեւեալ ձեւով՝

- Գործադիր Վարիչ, Ֆրէնք Տ. Լենթըրմէն Շրջանային Կեդրոն
3303 Wilshire Blvd. Suite 700, Los Angeles, CA 90010 (213) 252-4900, msullivan@lanterman.org կամ
- Human Resourcesի Վարիչ, Ֆրէնք Տ. Լենթըրմէն Շրջանային Կեդրոն
3303 Wilshire Blvd. Suite 700, Los Angeles, CA 90010 (213) 252-4924, kchacana@lanterman.org կամ
- Գործադիր Միութեան Տեսուչ, Ֆրէնք Տ. Լենթըրմէն Շրջանային Կեդրոն
3303 Wilshire Blvd. Suite 700, Los Angeles, CA 90010 (213) 252-4902, flara@lanterman.org կամ

Անվայել աշխատանք կամ կասկածելի անվայել աշխատանք ռեւ ժամանակը կարելի է ներկայացնել Վարիչ Մարմնի Ատենապետին կապուելով Կեդրոնի Վարիչ Մարմնի Ներկայացուցիչին հետ՝ flara@lanterman.org .

Անվայել աշխատանք կամ կասկածելի անվայել աշխատանք ռեւ ժամանակ կարելի է ներկայացնել Քալիֆորնիոյ Զարգացական Բաժնի Ծառայութեան (Department of Developmental Services/DDS) հետեւելով գանգատի ընթացքի նախագծին՝ www.dds.ca.gov/complaint .

Մատնիչի Գանգատը պէտք է պարունակէ յստակ եւ հակիրճ խօսք կարծեցեալ անվայել աշխատանքի մասին եւ ռեւ ապացոյց որ զօրաւիզ կը կանգնի վկայութեան: Եթէ անուն մը կամ ռեւ ուրիշ տեղեկութիւն մը (վկայ կամ վաւերագիր) չէ հայթայթուած որ յստակօրէն կը հաստատէ կասկածելի անձի անվայել արարքը, եւ շրջանային կեդրոնը կամ հայթայթող/պայմանագիրի աշխատավարը, խուզարկող Մարմինը կրնայ բաւարար տեղեկութիւն չունենալ

հետապնդելու: Իսկական փաստաթուղթ պետք է որ հայթայթուի երբ կը յանձնուի գրաւոր տեղեկութիւն: Տեղեկացնող անձերը պետք է իրենց քով պահեն յանձնուած փաստաթուղթերէն օրինակներ իրենց անձանկան արխիւներուն համար՝ որովհետեւ անոնք ՖՏԸԿԻն քով կը մնան:

4. Համաձայնութեան Պաշտօնեայ

Կեդրոնի Համաձայնութեան Պաշտօնեան Գործադիր Միութեան Տեսուչն է: Համաձայնութեան Պաշտօնեան պատասխանատու է համակարգելու խուզարկութիւնը եւ լուծումը՝ բոլոր հայթայթուած զանգատներուն եւ պէտք է խորհուրդ տայ Գործադիր Վարիչին եւ կամ Վարիչ Մարմնի Վարիչներու Գործադիր Յանձնախումբին: Համաձայնութեան Պաշտօնեան ուղիղ կապ ունի Վարիչ Մարմնի Վարիչներու Գործադիր Յանձնախումբին հետ եւ իրմէ պահանջուած է գոնէ տարին մէկ անգամ տեղեկացնելու Գործադիր Վարիչին եւ Վարիչ Մարմնի Վարիչներու Գործադիր Յանձնախումբին համաձայնութեան աշխատանքներէն:

5. Անանուցութիւն եւ Գաղտնապահութիւն

ՖՏԸԿԻն ամէն կարելիութիւն պիտի ընէ պահպանելու զանգատողի մը գաղտնապահութիւնը որ մատնիչի զանգատ կ'ընէ, եթէ զանգատողը կը պահանջէ գաղտնապահութիւն: Սակայն, հակառակ պարագայի, ուր Կեդրոնը չի կրնար գաղտնապահութիւն պահել իր օրինագրային պարտականութեան պատճառով (նեոարեալ վստահեցնելով յաճախորդներուն առողջութիւնն ու ապահովութիւնը եւ շրջանային կեդրոնի համաձայնութեան պայմանագիրը), Կեդրոնը պիտի ջանայ տեղեկացնելու զանգատողին որ որոշ տեղեկութիւններ պիտի ներկայացնէ՝ նախքան հաղորդելու հաստատուած տեղեկութիւնը: Աւելի'ն, հաւանական է զանգատողի ինքնութիւնը չալտնուի չատուկ օրէնսդիր կազմակերպութիւններուն՝ որոնք կը վարեն ոճրային խուզարկութիւն:

Թէեւ զանգատներ կրնան ներկայացուիլ անանուն կերպով, եթէ բաւարար տեղեկութիւն չէ հայթայթուած եւ խուզարկութեան խմբակը ռեւէ ձեւ չունի կապ պահելու զանգատողին հետ, կարելի կրնայ չըլլալ՝ հետապնդելու ներկայացուած զանգատները:

6. Խուզարկութեան Գանգատի Ընթացք

Համաձայնութեան Պաշտօնեան կամ ուրիշ տեղեկութիւն ստանձող անձ մը պիտի համաձայնի եւ ստանալու տեղեկութիւնը՝ աշխատանքի հինգ օրուայ ընթացքին: Բոլոր տեղեկութիւնները պիտի շուտով խուզարկուին եւ յարմար ճշդուած վարմունք պիտի առնուի ինչպէս երաշխատուած է խուզարկութենէն: Գանգատողը պիտի ստանայ գրաւոր տեղեկութիւն խուզարկութեան արդիւնքէն եւ եթէ այլ քայլեր առնուած են: Այս տեղեկութիւնը պիտի հայթայթուի այն աստիճանէն որ չի բեկաներ գաղտնապահութեան: Այս խուզարկութեան ընթացքը նաեւ կը կիռարկուի փոխվրէժի զանգատներուն:

7. Յայտարարութիւն

ՖՏԸԿԻ Վարիչ Մարմնի անդամները, գործաւորները, ծառայութիւն հայթայթողները, յաճախորդներն եւ իրենց ընտանիքները պէտք է տարեկան զեկուցուին, ՖՏԸԿԻ կայքէջով, եւ այլ միջոցներով, Մատնիչի Ապահովագրի ինչպէս նաեւ Նահանգային ԶԲԾԻ (DDS) Մատնիչի Գանգատի Ընթացքի մասին: ՖՏԸԿԻ Վարիչ Մարմնի անդամները եւ գործաւորները ստիպուած են ստանալու տարեկան այս գրաւոր Ապահովագիրը եւ նման ճանաչում պէտք է մնալ Կեդրոնի Վարիչ Մարմնի եւ անձնական թղթածրարներու մէջ:

Գործաւորներ որոնք հարցումներ ունին այս վկայագրի մասին պէտք է կապուին՝ Human Resourcesի Վարիչին հետ: